

Հարց Հնարավոր է արդյոք Արցախի տարածքում սեփական բջջային հեռախոսահամարին ստանալ միայն մուտքային զանգեր կամ ընդհանրապես արգելափակել կանչերի մուքն ու ելքը՝ միևնույն ժամանակ պահպանելով բջջային համարը:

Պատասխան Արցախում գործող բջջային հեռախոսակապի օպերատորը մատուցում է նման ծառայություններ: Նման ծառայություններին միացումը կատարվում է անվճար, իսկ ամսավճարների սակագները ողջամիտ են և հաստատված կարգավորողի կողմից: Օրենսդրության պահանջներին համապատասխան՝ սակագնի արդարացի և ողջամիտ լինելու մասին հիմնավորում կարող է համարվել արդեն իսկ նմանատիպ ծառայության համար սահմանված նմանատիպ սակագինը: Հայաստանի Հանրապետությունում գործում է նմանատիպ ծառայության համար նմանատիպ սակագին, ընդ որում Արցախում գործող սակագինն ավելի մատչելի է: